

անունն անձի մը հետ յիշուած գրքերն ընդ-
օրինակած է վիժի քաղաքի մէջ, ուր գտնուած է
եկեղեցւոյ մ'օծութեան արձանը: Այս իմաստն
որ եւ իցէ գոտարութեան շինք յուսար թէ
բաղիւի, առաջին անգամ հոս չէ որ կը ըսնէր
Միխիթարի աշուպի հաւաքածոյի մ'օրինակու-
թիւնն (հմմտ. Գաղէմբարեան՝ Մ. Արիվանցի
եւ իւր Նորագիւտ գրութիւնը. ՀԱ. 1891,
161—167): Բայց ամէն բանասիրի անիմանալի
ձեւացած է ցտժմ հաւաքածոյի օրինակութեան
տեղն: Ուր կը գտնուի վիժի քաղաքն, Հ. Գա-
ղէմբարեան վրիպակ մը կ'ենթադրէ հոս
(ՀԱ. 1891, էջ 162). Իրուէ (Գաղ. թարգմ.
Մ. Պետերս. 1869, էջ 22), Կարրիէր (Une
version etc. p. 477) Նոյնպէս անորոշութեան
մէջ են եւ կը փոխադրեն բառական ձ. Vimi
Kaghak (ville du Rocher, ville de pierre)
այսպէս եւ Տէր-Մովսէսեան (Исторія пере-
вода Библии на арм. языкъ. p. 242).
Իսկ Պատկանեան (Ռուս. թարգմ. Մ. Պետերս.
1869, p. 360) կը թարգմանէ на скалах
города: Տէր Մովսէսեան մինչեւ անգամ կ'են-
թադրէ հոս յունական քաղաքի մ'անուան
թարգմանութիւնն, իրր Սετραπολις մը՝ նման
Ἡλιопоλεις եւն:

Կ'առաջդրենք պահել անփոփոխ ձեռա-
գրին ընթերցուածն «Վիժի քաղաք», = Ժայռէ
քաղաք = Այրի-վանք: Դռնօթ է Գեղարդայ
Չորոյ «Այրի-վանք» հոչակաւոր մենաստանն,
որ շինուած է վիմուտ, ափափայ ձորի մը մէջ՝
քարաժայռերու, վիմի մէջ փորուած, ուսկից
առած է մենաստանն անունն «Այրի-վանք»,
Ոչ միայն մենաստանին հաստատութիւնն ժայ-
ռերու մէջ է, այլ եւ շրջակայ տեղերն ալ
այնպիսի ափափայ վայրեր են. «Բազում գոն
ի Չորն Գեղարդայ փորուածու այրք եւ ամ-
րոցք ի հին ժամանակաց, կը գրէ Առաքել
Խոսեղով 1601ին պատահած արկածի մ'առ-
թիւ (Այրարատ 346): Այրի վանուց այս
հանգամանքը կը պարզեն մեր աչաց նաեւ Ար-
ձանագրութիւնը. Հաղարկեան Պաօշ, Վասակայ
որդին, իրր յամի 1245 գրած արձանագրու-
թեան մը մէջ կը խօսի. «Ես Պաշ... գան-
ձագին արարի ի տերանց աշխարհիս, Վիմու-
հոչակն Այրիվանն ընամբ եւ դաշտու եւ
ամենայն կազմութեամբ որ կայր ի սմա. փորեցի
ի վիմէ տունն Աստուծոյ յիշատակ ինչ...»
(Այրարատ 341): Եւ ուրիշ արձանագրու-
թեան մը մէջ անոր որդին Պապուք կը գրէ
Ն. յամի 1288. «Օգնութեամբն Աստուծոյ ես

Պապաքս որդի Պապուշոյ եւ ամուսին իմ Ըռու-
զուքան փորեցար զժամաստանս յինքնաբուն
վիմէ յիշատակ հոգւոց մերոց...» (Այրարատ
342): Ի՞նչ տարբերութիւն ունէր ուրեմն
վանքս իւր մարդարնակ շրջակներովն քա-
ղաքէ: Կան ամրոցներ, կան եկեղեցիներ, կան
բնակավայրեր, ամէնն ալ փորուած ի վիմէ,
կան վերջապէս ասոնց մէջ ալ բնակիչներ.
Այրի վանքն ուրեմն վիմի մէջ փորուած
քաղաք մ'է: — Այս կէտիւ լուսաւորու-
թեամբն դիւրին է գտնել նաեւ այն եկեղեցին,
զոր օրհնած, այս է օծած են: Կ'օծուի եկեղեցի
մը երբ նոր կառուցուի: Մեր փնտռելէն հե-
տեւաբար պէտք է ըլլալ յԱյրի վանս եւ հաւ-
անականաբար Միխիթարայ գրած ժամանակէն
ոչ շատ յառաջ, քանի որ նա հոս իրրեւ նոր
կատարուած դէպք մը, թարմ յիշողութեան
առարկայ մ'արձանագրած է: Միխիթար, ինչ-
պէս Հ. Գաղէմբարեան ապացուցուցած է (ՀԱ.
1891, էջ 166), իւր ժամանակագրութիւնն
գրած է յամս 1289—90. այս թուականին
շատ մերձ է Պապաքայ կառուցած եկեղեցւոյն
(ժամաստան) ժամանակն 1288. ժամանակի
աշուպիսի գուգադիպութիւնն ոչ ինչ կ'արգելու
հաստատելու թէ այն է օծածը: Այս ամէնէն
կը տեսնուի ուրեմն թէ Միխիթար Այրիվանքի
1288ին կառուցուած եկեղեցին օծած է եւ
այն միջոցներն գրած է ընանէի հետ յիշուած
գրքերը: Եղբայրացութեան վերջնական ստու-
գութիւնն սակայն այն ասան միայն պիտի հա-
տատուի, երբ յերեւած ելլէ օրինակած
Հաւաքածոն իւր յիշատակարանովն:

Հ ՆԵՐՍԵՍ ԱՅՈՒՅԱՆ



1906 ԹԻՒՐ ԿԱՎԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՒՆԻՍ

I. ՆԵՐՍԵՍ ԶԻՋՅԱՆ

2. Բաղարաքական մտքի զարգացումը:

2. Բաղարաքական մտքի զարգա-
ցումը: Մշակի քաղաքական դասանիւթը
1880-ական թուերին. — Արժողունու քա-
ղաքական դասանիւթի խորտակումը
1890-ական թուերին. — Մտքերի շիո-
թութեան շրջան. — Մտքի եւ սրտի նա-
կընթացը. — Նոր հոսանք:

3. Եղբայրացութիւն: — Հին հոսան-
քի բախումը. — 1905 թուի առաւելութիւնը:

Բազմաթիւ խնդիրներ, որոնք առհասարակ հասարակական քաղաքական կեանքի զարգացման հետ կապուած են, այստեղ քննութեան առարկայ կարող են լինել. այդպէս է նոր հասանքի ծագումը եւ սղփուրը, կեանքի եւ գրականութեան անպտուղ տասնամեակի սահմանող պայմանները, եւ վերջապէս այդ երկու խնդիրներին յարաբերութիւնը այն կուլտուրական շարժման հետ, որ գոյութիւն ունէր Աովկասի, Ռուսաստանի եւ Տաճկաստանի երիտասարդութեան մէջ քննուող տասնամեակի ընթացքում: Ահնջ այստեղ այդ խնդիրների վրայ երկար չենք կանգ առնել այն պարզ պատճառով, որ ինքն ըստ ինքեան այդ խնդիրները առանձին առանձին աւելի մեծ եւ ընդհանուր նիւթ են ներկայացնում ըստ բովանդակութեան եւ ըստ քանակի մի քննութեան համար, քան այն մասնաւոր նիւթը, որը մեր յօդուածի համար որոշուած է: Գիտենք նաեւ, որ կարծի եւ ամբողջ ստորագրել այն նիւթերը նոյնպէս մասնաւոր եւ թերի մի գործ կը լինի: Բայց այստեղ, մեր առաջադրեալ խնդրի լրիւ ստորագրութեան համար, այն խնդիրները անցողակի մենք մատնացոյց պէտք է անենք, աւելի ի վկայութիւն նոցա կոչելու քան պարզաբանելու նպատակով, մանաւանդ աչքի առաջ առնելով, որ այն խնդիրները յարուցած եւ քննուած չեն երբեք եւ ընթերցողներին անժամօթ: Ասակած չունենք, ուրեմն, որ անցողակի այս յիշատակութիւնը ամբողջական չէ, ինչպէս մեզ, նոյնպէս եւ բարեմիտ ընթերցողի եւ քննողի համար:

“Ինքնապաշտպանութիւն” — հայերի եւ հայերի մասին խօսող օտարների ամենից շատ կիրառած ժամանակամիջոցն է 1906 թուին, բայց իրեւ իմաստ քիչերն են հասկացել “ինքնապաշտպանութիւն”, խօսքը պատմական ճշմարիտ բովանդակութեամբ: Ամենից շատ ինքնապաշտպանութիւն ասելով հասկանում էին թուրքի դէմ մղուած կռիւը, որ աչքաչափ դիտողութեան հետեւանք է: Միւշկեռ ակաւնատեսի որոշ եւ բացառիկ մոմէնտից ստացած արտաքին տպաւորութիւնը գրեթէ ոչինչ չէ բովանդակում ի վկայութիւն այն մեծ խնդրի, որի իրեւանիւնից մէկը մարդկային օրգանական լեզուով կոչուած է “քնա-

կան ընտրութիւն անհեցողութեան”, Ահնջ ասում ենք “գրեթէ”, որպէս զի “ոչինչ” ասած չլինեք: Ինչու: Իրենց երկար եւ փորձառու անցեալի մէջ հայերը բազմաթիւ օրինակներ են տուել ի վկայութիւն այն մտքի, որ ինքնուրոյն առանձնապատուկ ցեղական ընկերական պայմանների ազատ անհեցողութիւնը հայ ազգի գիտակցական պահանջն է անհրաժեշտորէն: Հայկական մտքի եւ պատմութեան հասկացողութեամբ ինքնապաշտպանութիւնը այդ պահանջն է: Այս թիւրք-հայկական ընդհարման թիւրիմացութեան մէջ այդ հասկացողութիւնը կարող է մէկը մտածել անգամ, որ այդ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնից էր հայը կուռի ձեռք զարկել, եւ որ թիւրքը եռանդուն ընդդիմադրում էր հայի կուլտուրական այն մեծ գործօն տարրին: Երբեք: Բաւական է զիտել, հէնց միայն այն հանգամանքը, որ այդ աւելի շարժումը բնականորէն կանգնեցրեք թէ՛ Հայի եւ թէ՛ թիւրքի հասարակական եւ անտեսական կեանքի մէջ ամեն յառաջագիմութիւն: Բաւական է մտածել, որ կուլտուրական ամեն նշանաբանից զուրկ էին թէ՛ համխառնական ոգով գրուած եւ հազարաւոր օրինակներով տգէտ ամբօրի մէջ գրուած թուրքիկները եւ թէ՛ հայերից փառաբորած Ասուդէրի “գեղեցկութեան, երբեքը Աովկասեան փոխարքայի պալատում, — բաւական է՝ համաձայնելու համար, որ մէկզմէկու մեկնած այն երկու շողողուն դեւ սարերը բացի կենդանական հասկանալի բնազդից ոչ մի ուրիշ թեզիզի չեն գոհացնում, եւս առաւել կուլտուրական որեւէ պահանջի: Իսկ համեմատորէն գիտելով, հայկական ինքնապաշտպանութեան այն պատմական ճշմարիտ բովանդակութիւնը, որ յիշեցինք առաջ, եւ այդ կենդանական բնազդը արեւելք եւ արեւմուտք են, ըստ որում միտքը արով չէ իւր նոսմնոմները կատարում:

Արդ, “ինքնապաշտպանութեան” կենդանական բնազդի իմաստ էին յատկացնում 1906 թուին, իսկ ցեղական սոցիալական պայմանների ազատ անհեցողութեան մասին ոչ ոք չէր էլ յիշում, երբ ինքնապաշտպանութիւնը գործ էին ածում իրրեւ ժամանակամիջոց հայկական խրտուհիների բնաւորութիւնը որոշելու համար, թէպէտ

եւ հասկացողութիւնների այդ քառասուն, ի վկայութիւն սխալ տեսութեան, կենդանական բնազդի որեւէ վախճանական արդիւնքը չյայտնաբերուեց: Հակադրապէս, 1906 թուին, ինչպէս յաջորդ զինք մէջ այդ կր տեսնենք, ցեղական սոցիալական պայմանների ազատ աճման մի նոր նուաճումն կատարեց հայկական քաղաքական կեանքը, նուաճումն մշտաշարժումն իդէալի, յարախաղաց գաղափարի: Աոր հոսանքը իւր տիրապետութեամբ այդ նուաճումը վկայեց եւ իրեն իրողութիւն՝ մի նշանաւոր երեւոյթ՝ Հանդիսարարի, — որ ցեղական սոցիալական պայմանների ազատ աճեցողութիւնը կովկասահայ շրջանում թիւր ճանապարհի վրայ չէ կանգնած, ինչպէս այդ կովկասեան ուրիշ ազգերի մէջ նկատուեց 1906 թուին: Այս խոստման համաձայն, այստեղ պէտք է ստորադրենք քաղաքական մտքի էվոլյուցիայից այն փոքրիկ եւ ամենամօտ ջրջանը, ուսկից նոր հոսանքը ոյժ ստացաւ իւր տիրապետութեան համար 1906 թուին: այդ ստորագրութիւնը անհրաժեշտ է իրազեկ լինելու համար թէ՛ հայկական ինքնապաշտպանութեան պատմական ճշմարիտ իմաստին, եւ թէ՛ այն սխալին, որից ազատ չէին ինքնապաշտպանութեան մասին բոլոր ճառողները 1906 թուին:

19րդ դարի վերջին տասնամեակում կովկասահայ երիտասարդութեան մէջ ծնուած նոր հոսանքը, որ նախորդ զինք մէջ ակնարկեցինք, ռազմ շարունակութիւն է, ըստ քրոնիկոնի, Վրիգոր Արծրունու ժառանգութեան անկման: Այստեղ ժառանգութիւն խօսքով մենք հասկանում ենք հայկական քաղաքական դաւանանքի այն ձիւղը, որ յայտնուեց Արծրունի, եւ որը աւելի երկար պատմութիւն ունի, քան Վր. Արծրունու ժամանակը իսկ: Այնչէլ հարկաւոր է, որ վերջին թիւը ռուսական պատերազմի հայերի համար փայլուն հետեւանքը շօշափելի շատ հիմքեր առուեց այն դաւանանքի վերահաստատման եւ զօրեղանալուն յովկասում, այն է ապահովումն գրադի քրիստոնեայ պետութեան հովանաւորութեանը: Վատերազմը ազատարար նպատակ ունէր եւ ցեղական հողի վրայ էր այն պատերազմի ձեռնարկութիւնը սրբաբորժուած: Աւստի

նա հայկական մտմտութեան մի նոր իրականացումն էր, որ ունէին կովկասեան հայերը սկսած Օրից մինչեւ Ղերսէս ձ: Ինող ձեռնարկութիւնը. ռուսական մտածուած քաղաքականութեամբ՝ հայ գեներալների Հայաստանի հողում տարած յաղթութիւններով հանդէս դալը ամեն խոշու խուժ մաքրեց. հայ դիվիզիոնի արջները — ուր սուրը կտրուկ լինի — որ միայն տանջուած պտի ըսպական բացարկունութիւն է, այդ սանտիմենտալ աղօթքի իմաստը անցաւ բոլոր խոշ ու խուժի սահմանից եւ Վր. Արծրունու ժառանգած քաղաքական դաւանանքի մի նոր յենարան պարծաւ: Հաճկական կառավարութեան ենթակայ հայութիւնը հակառակ հովերի պաշտամունք ունէր միշտ եւ այդ ժամանակ, եւ մինչդեռ ռուս քաղաքականութիւնը իւր յաղթութիւններով ապահոված էր զգուժ իր հեղինակութիւնը աւստիւլում, Ռուսիոյ դաշնագրութիւնը ռազմ ժառանգահայ երիտասարդութեան հովերին ոյժ ու նոր հողի տուեց, զինքով հայկական դաւանների ապագայ բախտը եւրոպական պետութիւնների հովանաւորութեան յոյսի սահմանում: Այնուամենայնիւ ռուս քաղաքականութիւնը չվհատուեց եւ իւր կողմից ոյժ ու նոր հողի տուեց կովկասահայ երիտասարդութեան քաղաքական դաւանանքին, որի միջուկը կազմում էր վստահութիւն դէպի ռուսական հովանաւորող քաղաքականութիւնը: Վր. Արծրունին այդ դաւանանքի ամենատեսչուն կուսակիցն էր եւ 1880ական թուերին նա շատ յենարաններ ունէր իւր դաւանանքի ճշմարտութեան: Վրեա էին Աւստրիական առաջին ժողովը, կովկասեան հայոց Արեւոքոթական, Հրատարակական եւ Հայուհեաց ընկերութիւնները, Վաղարշականութեան իմաստնալարութիւնը, ազգասիրական գրքերի հրատարակութիւնը, ռուսամարանների անարգել աճեցողութիւնը եւն, ազգա բոլորը ռուս կառավարութեան թոյլութեամբ գործուն միջոցներ էին՝ եւրոպական դիւանագիտութեան հակակշիռը հանդիսադրելու նշանակութեամբ:

Այսպէս ժառանգահայ եւ ռուսահայ երիտասարդութեան հակամտների տարբեր վիճակը այդ շրջանում միայն դիւանագէտա-

ների միջութեամբ չէր պոյսմանաւորուած։ Լւեքի խոր պատճառներ ունէր այդ տարբերութիւնը։

Պատասխայ երիտասարդութիւնը շատ փորձեր ունէր իւր սոյնեալում համոզուելու համար որ Վոլկիստով քաղաքական կեանք ստեղծել նա չէ կարող։ (Վրի փորձեր, Պետրոս Սեֆի եւ Վոտարինէ Ի. Ի ցանկութիւնները, վերջապէս Յովսէփ Լեղութեանի ջանքերը — բոլորը այդ նշանակութիւնն էին ունեցել և Վոլկիստովին զրաւել էր կառավարութիւնը առանց իրական աղիւիւնք առաջ բերելու։ Իսկ Վերսէս Լ. Ի ժամանակի կատարուած շարժումը եւ յետոյ նրա պատուաւոր պարտը Վիշնեւ ամեն կասկած փարստել էր արդէն։ Յովհաննէս Վարբեցին եւ «պալատէնիայի» շնորհուրով մի սթափեցնող վախճանական վարձատրութիւն էին նախորդ ջրջանների բոլոր շարժման։ Վեռ միւս կողմից էլ զրացի երկիրների պատմական բախաւը կառավարութեան քաղաքականութեան քաղաքական ցածր կողմաստացայի աչքում մերկացնող նշանակութիւն ունէր։ այդպէս էին Վրաց ժողովուրդների եւ Եզգիների վառած երկար տառապանքները աղգային ինքնուրոյնութեան պաշտպանութեան համար։ Եւր Վեռի վեռնիկ շնորհիւ 1860ական թուարկութեան բառած ուստացայ խոհեմ երիտասարդութիւնը թողից իւր ապագայ քաղաքական կեանքի շարժուցիչ պատկերը եւ հետամուտ եղաւ քաղաքակրթական եւ կուլտուրական տարրերի ժողովրդականացման։ Վաղարեանի, Վարդէկեանի դպին էր այդ, որից միայն Ս. Վաղարեանը ընդվզից, եւ զնայ առաջին ուս ընկերվարականների հետ միացաւ։ Հետեւեալ ջրջանում Վաղարեանին հետեւեցին Լեւոն Թումանյան, Ստեփանէն, Յովհաննիսեան, Լեւոնյանեան եւն. Բաքիին էլ այս ջրջանի ըմբոստը հանդիսացաւ։

Եւս երեւոյթը կողմաստացայի քաղաքակրթական մտքի պատմութիւնը ընդարձակ հետազոտողը համար ուրիշ մեկնութիւն եւս ունի։ տասնեակ տարիներ շարունակ կողմաստացայը զբաղուելով քաղաքակրթական հարցերով, միայն յաղեցնում էր իւր ձգտումը դէպի մարդկային ազատ կենցաղավարութիւնը։ այն զբաղմունքը ստի մի բնական հակակշիւ էր նրա նախկին

տարիական վեռնիկին, որ դարեր շարունակ կրել էր նա հոգեպէս եւ մարմնապէս Պատմական պահանջ էր, ուրեմն, թէ դարեր, թէ լրացութիւնը, թէ վաճառականութիւնը, թէ հասարակական կեանքը ուստացայի համար, եւ կառավարութիւնը հակասաւ այն պահանջին նշանակութիւնը եւ օգտու եղնորանից, Խելով կողմաստացայի քաղաքական կեանքի մասին ամենավերջին յուսոյ նշոյր, նա փոխարէնը քաջաւերց քաղաքակրթական հասարակական յառաջադադութիւնը միայն, որպէս զի վերջին գործոն տարրի փայլով նստանայ նախկին քաղաքական ցնորքների ակնաստիղ պատահելը։ Բայտ որում միւսողեւ կուլտուրական յառաջադիմութիւնը որոշ արածութիւնների սահմանում պէտք է շարժուէր եւ համեմատորէն յետագոյն չարիք էր։ Ընդհակառակն քաղաքական ինքնուրոյն կեանքի ձգտումն իբրեւ ազգային ինքնաձանաշութեան դարաւոր զգացումն եւ աղմուտը եւ վատնգաւոր չարիք էր կողմաստեան մանր ազգերի դրացիութեան վեռնիկում։ Լեւոնյան չարիքով, փոքրագոյնով, երբ կը նստանար երկրորդ չարիքը, հզորագոյնը, այնուհետեւ ինքնուրոյնեան առաջին փոքրագոյն չարիքը դժուար չէր վերանցել՝ բառեալով այն արածութիւնները, որոնք առաջ էին շարժում իրեն չարիքին։ Եւս քաղաքականութիւնը գործնական էր. ամբողջ յիսուն տարի 1840 թուերից մինչեւ 1890 թուերը կողմաստացայը լուութեամբ շարժուեց իրեն թելադրած բախտի ազգութեամբ եւ կառավարութեան անհանգստութիւն չապառանգութեւն այդ ջրջանի վերջերում կառավարութիւնը բաւ համարելով փոքրագոյն չարիքի քաջաւերութիւնը, ակնայ արածութիւնները կրճատել — խափանելով լրագրութիւն, ընկերութիւն, դարոցներ, վերջապէս կալուածքներ, իսկ աւելի կանուխ ջնջուած էր հոյ զորավարների ցունը ծառայութիւնից։

Եւր 1880ական թուերին կողմաստացայ երիտասարդութիւնն ապուրնում իւր կառավարութեան նախ չարունակութիւն էր նախորդ ջրջանի, երկրորդ հետեւանք էր այն վեռնիկի, որի մէջ գտնուում էր Վոլկիստի մանր ազգութիւնների, նրանց թելում նաեւ հայի, տիրապետութիւնը։ Տաճկացայ երիտասարդութեան քաղաքաւ

կան ձգտումներն այդ շրջանում եւ աւելի հասունութիւնը քան կովկասահայինը արդիւնք էին այն մի շարք ազատագրութիւններին որոնցից վարակուած էր երկար ժամանակ նա: Կովկասահայ երիտասարդութիւնը տարածութեամբ եւ մոքի ոյժով իսկ՝ հեռու եւ անհետաքրքիր էր այդ բուրբից: Միւս կողմից տաճկական եւ եւրոպական պետութիւնների բացառիկ յարակցանում տաճկահայի համար զբաղուելու առտել քաղաքական քան քաղաքակրթական հասարակական խնդիրներով:

Տաճկահայ եւ Ռուսահայ երիտասարդական երկու տարբեր բանակների մասին թիրի կը լինի մեր համառօտ յիշատակութիւնը, եթէ մոռացութեան ամէնք կովկասահայ մի երիտասարդի նշանակութիւն ունեցող առաջարկը որ նա արել է 1880ական թուերի շրջանում: Երկու բանակի ձեռքբում, տարբեր իւր քաղաքական եւ կառուարական հակութիւնով, հայ երիտասարդութիւնը չունէր ոչ մի զործօն հաղորդիչ տարր, որով նա կարողանար միութիւն ներկայացնել: Եւ ահա Բժշկապետ Բապարատ Կուստարյանը առաջարկում է այդպիսի նպատակով մի ընկերութիւն հաստատել հայայն հայութեան միացնող լուսաւորութեան եւ ներթական օգնութեան կարգի սահմանում: Եւ այդ առաջարկութիւնը քաղաքականապէս կիրառագործելի էր եւ մնաց անհետեւանք: Բայց նա շատ քննորշիչ է իւր գոյութեամբ այն շրջանի համար, որի մասին, մենք միայն թեթեւակի հարցասիրութեամբ յիշելիք: Եւ այդ առաջարկութիւնը ոչ մի

հետեւողական առնչութիւն չունէր Սիւնիական շարժման հետ, որ նորածին էր այն ժամանակ, բաց ի այն, որ ինչպէս առաջարկութիւնը նոյնպէս եւ Սիւնիական շարժումը զրդիլ ունէին Լաւրդական դիպլոմատիայի ցուցած իրական ծառայութիւնը Բալքանեան ժողովուրդների ազատագրութեան մէջ: Լեւոպոլիս էր նաեւ այն, որ առաջարկութիւնը չընդգործուէր ոչ լոկ քաղաքական բարդ կազմութիւն ստեղծելու անհնարաւորութեամբ, այլ նաեւ որովհետեւ համակրութիւն էլ չգտաւ կովկասահայ երիտասարդութեան մէջ:

Արտայայտութիւնը ժամանակից պատմական ճշմարտութիւն ունի: Այդ տեսակետով նայած, ուսանողների օգնելու նպատակ ունեցող փոքրիկ ընկերութեան օգնականութիւնը, Սեբաստիա իբրեւ սոսկ մի հասարակական զործիք պատկերէ եւ երեսմէ մի չէ զիտուողը: Համայն հայութեան նայելով ընկերութեան դէմ մշակուող նորոգող զբոյժ հրապարակաբար քաղաքական անհասունութիւն է փոքր իրեն ժամանակում: Եւ այդ նկատել է ինքն Կուստարյանը. Մարտ 1881, Մարտ 8, Թ. 82 նա գրեց որ հայը որքանից հեռու նայել չէ կարող, եւ զնդհակառակը հայը երբեք է անբարո, որ նոյն է նրա բնականական ազատութիւնը, նոյն է հասարակական կենսութիւնը եւ եւ խնդրատե նրա քաղաքական վիճակը: Երբեք է նա իւր բնիկ երկրում, ապա նա ունի եւ նոյն զաւգափոր ամեն մի կենսական երեւոյթի ճշմարտութիւնը: Եւ նոյն նոյն հակադրութիւն հասարակական զբոյժացման, փոքրիկ եւ օրէնքներէ զեղող մի մասնակցի, հայի խօսքը յիշելով, ամենք մենք չափով նշանակական երեւոյթի ճշմարտութիւնը: Եւ այդ ճշմարտ է. այն բոլոր յօդուածներով, որ Եւրոպայի գրեց քաղաքական խնդիրների մասին, այն բոլոր քաղաքականներով, որ նա հիւրընկալում էր յՊոստոմ քաղաքի յօդուած Լայպտաքի հարցի, եւ այն բոլոր տարրերով ինքնինքնով եւ հարգաւոր դաստիարակութիւններով հանգրծել, — Սեբաստիան էր եւ մնաց մինչեւ վերջը սոսկ կազմաւորուած հասարակական զործիք: Բաղադրական մտքով առաւելող երիտասարդութեան նա չկողմնակցելու, ընդհակառակ իւր Մամուլը Բաֆֆին վերում տարու Բեռլինում տակը, իսկ պարզամտեմբար: Արտայայտական զնայ Մարտը հիմնով մի խնդրական խոյսարգելու մարմնով, նշանակութիւն չունի եւ չենք եւ մասնում, ու այդ մարմնի անդամները Արտայայտական Մարմնից հոս անգամ էնին առել եւ օտար մարմնը լուծուց ինքնինքնով հիմնադրել մի բանաստեղծի, Մամուլի երեւի, երբեք հետ փայլի: — Եւրոպան քաղաքական միացող սլապէս իւր նշանակութիւն չունէր իւր ժամանակ, սլապէս է մի կարծիքով: Որքան կարծիք մեզ յայտնի է: Միջ. Եւրոպականների իւր Կուստարյանութիւնը եւ նրա հասարակարգից զբոյժի մէջ Սեբաստիանը անհասարակական ընկերութիւնը դնում է ի ծառայութիւն առնչահայ երիտասարդութեան ծրարիքները (էջ 5): Այդպէս միայն, միջնակ. սլապէսի արտայայտող եւ անհնայ որչափ անբար: Առաջարկ ընծագողութեան մէջ առեկ բարգում եւ քան պարզում մասնակցի խորհուրդու ինքնինքնը, նոյն է եւ այդ պատճառով: — Կուստարյանի տաճկարկութիւնը — Լայպտական Բարբ. ընկ. եւ կազմ. Լայպտ Բարբ. ընկ. — արտայայտ առած անհասարակ նայի են: Մշակի մէջ քաղական անքննութիւններ կան այդ մասին. ինքը Գ. Կուստարյանը կենդանի աղբիւր է բոլոր բոլոր նիւթերը քանից մեզ պէս չենք:

Գ Կուստարյանի առաջարկութիւնը չհաստատուեց երիտասարդութիւնը 1880ական թուերին. առաջինը Սեբաստիան էր, որ համոզեցաւ. նա իւր անհամար ընդ ընդ զբաւ մի առաջարկող յօդուածի մէջ բազմեց (Մարտ Թ. 78, 1881) այդ առաջարկութեան դէմ. աւելի լաւ էր մի երկու ասանակ պաշտօնը նպատակ ունեցող մի ընկերութիւն հիմնել, որից նա, քան եթէ մենք անհասարակներ յայտնուէր, ընդարձակեալ ընկերութիւն կազմէր, հիմնադրող հայտնի եւ առջին: Այս բոլորը հիմքը անհասարակ հային էր: Մի բարձր անգամ Սեբաստիան, վերանայելով, որ Կուստարյանը անձնաւոր մեծանշանով իրենից Սեբաստիանը էլ չեմանայ, Մշակի առանձնայ հասարակ հրապարակում անկէց հանդէպ Կուստարյանի յայտնի ընկերութեան ծրարի: Բայց ամեն անհասարակ հայուն թեւադրութեամբ արտայայտութիւն մի չափով հասարակական նշանակութիւն ունի, թէ որքան այդպիսի

1880ական թուերը այդպիսի զորութիւն ունէին. հովանաւորուող գաղթականական շարժումը, իրար ետեւից ծնունդ ընկերութիւնները, գպրոցները, ժողովները ամենքին հմայական շրջանի մէջ էր ձգել. ոչ ոք չէր կարող մտածել հաւարնից դուրս եղած գործերի մասին: Ինքը Արծրունին նոյն իսկ հակառակից մի համայն հայութեան ընկերութեան մտքին: Այդպիսի տեղական նեղ գործունէութիւնը, ինչպէս միանգամ էլ յիշել ենք 1860 թուից սկսուեց, «կազարեան առաջարկել էր հիմնել «ընդհանուր հայկական ընկերութիւն վանն բարեկարգելոյ Սուսստանի շքաւոր հայոց նիւթական եւ բարդական կենտրոն», բայց նրան անողուեց միայն տեսնել Ռազուի Սարգստարական եւ նոր «կախիճեանի Վարեգործական ընկերութիւնները (Հանգ. Բն. 1904, յունուար, 6): Իսկ Արծրունին եւ Իսիֆիլը երիտասարդութիւնը կենդրոնացան այն ժամանակ «կաւասարդեանի շուրջը լրացնելու այդ պակարը, «կովկասեան» մի օղակով սահմանադրելու համայն հայութեան նայող նրա առաջարկութիւնը. նոքա հիմնեցին կովկասեան Հայոց բարեգործական ընկերութիւնը իւր բազմաթիւ գաւառական ծիւղերով — Էրզրում, Երմուխում, Ելքասանդրապոլում, Կարսում, Վաղարշապատում, Եւսեյաբլում, Եւսեյում, Երբայազդում, Երզրոյում, Բաթումում, Վօրում, Երեւանում, Եւսեյաբլում, Զին. Կախիճեանում, Վաղդուանում, Վերքէնում, Իսիլում եւ Զինիվալում:

Հովանաւորող քաղաքականութեան հմայքը այդքան ոյժեղ էր. նրան կործանելու համար հարկաւոր էր որ նա ինքը իրեն կործանէր. եւ այդպէս էլ եղաւ: Ընդհին իւր միջոցների մէջ այս կամ այն շրջանում թողատրած փոփոխ յարաբերութեան դէպի մէկ կամ միւս հարցը, կովկասեան կառավարութիւնը անընդունակ հանդիսացաւ մնալու դէպի կովկասահայր միշտ միակերպ ծածկամտութեամբ եւ տակաւակայով: 1880 թուերին ցարի դէմ կատարուած ոճիրը կառավարչական միտքը կաշկանդեց միանախափին ինքնապաշտպանութեան կռուի զգացմամբ, որը այդ դէպքից քիչ առաջ մոռացութեան էր մատնուած ազատարար պատերազմի շրջանում:

Այդ դէպքից յետոյ կայսերական կառավարութիւնը նախաձեռնող քաղաքականութիւն չգուցեց Արեւելեան հարցում, ուստի ազատարար պատերազմը մնաց անսկսունկովի վիճակում, Արեւելեան հարցով այնուհետեւ նա զրադուեց այն ժամանակ, երբ եւրոպական դիպլոմատիայի ինտրիգները ստիպում էին, ի սէր իւր երկրի եւ սահմանների, զբաղուել նրանով: Ինչհամար կառական, կայսերական կառավարութիւնը, ինքնապաշտպանութեան կռուի զգացմամբ բռնուած, զանազան ուղղութեամբ եւ երկար, եւ եռանդուն գործունէութիւն ցուցաբերեց սահմաններում, ինչպէս ամեն տեղ նոյնպէս եւ կովկասում: 1884 թուին հայոց եկեղեցական դպրոցների «սահմանագիր», կանոնադրութիւնը հրատարակուեց: 1885 թուին Սակարը կաթուղիկոս նշանակուեց, եւ դպրոցները փակուեցին. 1888 թ. Վոյժենիայի նոր խորագրութեան լուր տարածուեց. դրան հետեւեցին կաթողիկոսութեան Վեներաբլի տեղափոխելու եւ Եւսեյանի մատենադարանը կովկասից հանելու դիտաւորութեան չար շուկները: Սակաւանակ կատարուած էին դիւանագիտական պարզաբանութիւններ ամեն տեսակ խնդիրների մասին, որոնք կովկասի ուսանցման կարող էր օգնել. ուս զաղթականութիւնը զօրեղացաւ այդ շրջանում, արտակարգ յանձնաժողովներ ուղարկուեցին մայրաքաղաքից հայի հայրենասիրութիւնը տեղի ու տեղը վերլուծութեան ենթարկելու, դեպքաններ պաշտպանի զստարահպատակ եկեղեցականի դասաւանդութիւնը դաւալեցնելու համար եւայն: Սակայն հայատեցութեան հետեւանք չէին այդ բոլորը. նոքա թեւադրութիւն էին այն ընդհանուր սրտատարափի, որով բռնուած էր կառավարչական միտքը իւր երկրի ներսում ամենուրեք, լինի հայի, լեհի, հրէայի, վրացուի խոնկուղի թէ ուս մուսթիկի դէմ — միեւնոյն էր: Արեւական կը լինէր եթէ այդ պայմաններում կովկասահայ երիտասարդութեան վստահութիւնը չթաւանար եւ նա թուրքու ալն ուղղութեամբ, որով ոյժեղ էր, սկսուեց Երծրունուց եւ աւարտուեց վերջերում Մշակով: Արծրունին Մշակ 1884 Յունուար 14ի Կ. Տի մէջ գրեց իւր կիսակերպարան

փոխուած քաղաքական դաւանանքը: —
"Դժմարիտ է, գրեց նա, տէրութիւններից
հայերին ամենից համակրողը Սուտաց կառաւ-
 վարութիւնն էր, բայց ազգերից հայոց ազգին
ամենից համակրողը անգլիական ազգն է
ձանկարուած ենք, որ թիւրքահայերը միշտ
պահպանեն նոյն բարեկամական զգացմունք-
ները դէպ ի անգլիական ազգը:"

Եւթրուսին ինքն է, ուրեմն, տար-
բերում էր եւ է, կառավարութեան եւ
ազգի համակրութիւնները իրարից. բայց
աւելի նշանաւոր է այն, որ անգլիական
բարի դիտաւորութիւնները, բանիւ եւ գոր-
ծով համակրութիւնը Եւթրուսին «թիւր-
քահայերից» խիլով ուղղում է դէպի
"հայոց ազգը": Եւթրուսի մի կերպարա-
նափոխուած քաղաքական դաւանանք էր
այդ, եւ մեզ յայտնի չէ նրա վերջնական
կերպարանքը այդ շրջանում: Հայտնի չէր
նաեւ իրեն Եւթրուսուին իսկ Ենթողական մի
շրջան էր այն, երբից մինչեւ է-ն:

Եւթրուսուին հայոց դպրոցների "աւհ-
մանադիր, կանոնադրութիւնը, ազգու քա-
ղաքական դաւանանքի կերպարանափոխու-
թիւնը նոր զարգացումն ստացաւ, անցողա-
կան շրջանը արագացաւ, բայց հրապարա-
կական արտայայտութիւն չունեցաւ, ցեն-
զորական կարգերի պատճառով. մինչեւ որ
առիթը կը ներկայանար, ներքին մտմտանք-
ները արտայայտուէին. հնարաւորութեամբ
այդպէս էր 1884ի կաթողիկոսական ընտրու-
թիւնը, որի մասին գրիւ եւ քարոզիւ կա-
րելի էր. եւ ահա այդ առիթով առաջին
հայոց որ առեց կովկասեան հայ երիտա-
սարգութիւնը այն էր թէ ինչ անել, ինչ
ծրագրով առաջնորդուել: Եզգը կամ նրա
մէջ գոյութիւն ունեցող զանազան կուսակ-
ցութիւնները ունին պատարաստած մշակուած
ամենքի հաւանութիւնը գտած մի որեւիցէ
պրոգրամ, դառել է արդեօք պրոգրամի
հայոց մեր մամուլն մէջ երբեւիցէ վիճաբա-
կութեան առարկայ: Եւրեք: Սուտաց-
նաների հիմնել, հոգեւոր դասակարգը մա-
քրել, ապահովել, եկեղեցական կառածք-
ները բարեկարգել դեռ մի պրոգրամ չեն
կազմում, որովհետեւ այդ տեսակ ընդհա-
նոր հայրերի մէջ ամբողջ աշխարհքը միա-
նայն է: Սեր հասարակութիւնը, իր ընդ-
հանրութեամբ առած դեռ երբեք պրոգրամի

հարցով զբաղուած չէ: (Ո՛շակ 1884,
թ. 40, Սարտ 20):

Եւ Եւթրուսեան այս առաջնորդողի
մէջ չէ հետաքրքրում իմանալու թէ ինչու
պրոգրամի հարցը յարուցուած չէ. այդ հարցը
մեզ հարկաւ որ է. պէտք է նկատել որ մինչ-
դեռ հասարակական կեանքի մէջ զպրոգրամը,
կառուածքները եւ, դասակարգերն ու նոցա
նշանակութիւնը Եւթրուսեանեան ծանօթ
են, քաղաքական կեանքի մէջ կաթողիկո-
սական բարդ հարցը լուծման պրոգրամով
անծանօթ է նրան, ինչու. որովհետեւ
հովանաւորութեան քաղաքականութիւնը
այդպիսի պրոգրամ միշտ ժխտում է եղել.
ինչ անել, ինչ ասպարհալ ձգտել եւ ինչ
միջոցներով — այդ հարցերը ծնուած էին
կովկասահայ քաղաքական մտքի մէջ 1880ա-
կան թուերի վախճանում: Կայսերական քա-
ղաքականութեան ինքնապաշտպանութեան
ներքին օրտաժարափի շրջանում: Եւթր-
ուսութիւնը վկայում է ինքեան որ պրո-
գրամի հարցը գտնիս էր Սովնաւորու-
թեան եւ վստահութեան քաղաքականու-
թիւնը տապալելու եւ տապալեց իսկ,
երբ Վարժապետեանի թէկնածութիւնը
զրուեց եւ արական շնորհիւ հէնց այն
երիտասարդութեան, որը պրոգրամ էր որո-
նում այդ ընտրութեան մէջ ղեկավարուե-
լաւ համար: Իայց անցողական շրջան էր եւ
պատրաստի պրոգրամ չկար, կեանքը չէր
ծնել այդպիսի պրոգրամ: Հարցը այն-
պէս լուծուեց, որ գերադասուեց ամեն վի-
ճակից տաճկահայ երիտասարդութեան
պրոգրամը, որի հոգին Վարժապետեան
էր: Եւթրուսեան բոլոր կառավարչա-
կան խտութիւնների անող շրջանում կով-
կասահայ միտքը պրոգրամ չտեղծեց. նա
հետզհետէ ընկաւ տաճկահայ պրոգրամի
հիւսուածքի ցանցը, բայց առանց ինքնու-
րոյն գործանութեան բացակայութեան.
Ըստ երեւոյթին այժմ վերջնականը պէտք
է համարել, բոլոր երկար անցողական շրջա-
ներից յետոյ, պրոգրամի այն խմբագրու-
թիւնը, որը աւելորդ ենք համարում
յառաջ բերել (Հմմտ. Կովկասեան վեր-
քեր 1903, 368, "Եւթրուսեան", 1907.
թ. 5, 27 փետր.):

Եւթրուսեանի միջոց խոսում է ինք-
նավստահութիւնը, նա, որը ինքն է իւր
բաղդը կարգադրել կամենում: Վա բարե-

ինամ հպատակներ — Մեկեքների, Արդու-
թեանների, Վերսեանների, Վաղարեանների
եւ Երթուրեանների ձայնը չէ. այդ աղաղակը
փշուր մ'է օգնութեան, Տաւրոսի, Մոռնի,
Խանաձորի փոթորիկներից, որ յետոյ տա-
րածուեց նաեւ Վովկասում:

Երդ ուր դիմեց Արծրունին պրոգրամի
հայրից յետոյ, եւ նրա Մշակը իրեւ հա-
տարակական մտքերի թարգմանը Բնչ պատ-
կերով արտայայտեց կուսակցութեան ա-
պագան:

Արծրունին անդրադառնալով համոզմունք-
ներ ունէր. նա միշտ մնաց այն ընդհանուր
հայրերի շրջանում, որոնց ամբողջ աշ-
խարհը համաձայն է, ըստ Երասխանեանի.
նա հասարական քաղաքակրթական գործիչ
էր եւ մնաց այդպէս միշտ. Վոյնպէս ան-
յողողող գանուեց վատահոլութեան եւ ինա-
մակալութեան քաղաքականութեան խն-
դում. Վերսէս Վարժապետեանի ընտրու-
թեան առիթով իսկ նա գրեց. Եւթմ
կարիք է հաստատապէս յուսալ, որ այդ
մարդը դանախով ընդհանուր հայոց կա-
թողիկոս, աւելի էլ միջոց կ'ունենայ գործել
այն ազգի համար, որին այդքան սիրում է.
դստնելով այն երկրում, Ռուսաստանում,
որտեղ հայերը աւելի բաղդաւոր են. գրե-
նուելով առաջ կայսրութեան եւ Ռու-
սաց կայսրի հովանաւորութեան տակ
(Մշակ Թ. 53, 19 Մայիս 1884.):

Եւթ տողերը գրելու ժամանակ եւ
նրանից առաջ Վովկասի լուսաւորութեան
գործը Նանտիկոս ձեռքին էր, իսկ Հայոց
հպատակութեան չափը քննելու համար
իշխան Ռախտմակոս յանձնաժողովն էր գոր-
ծում Վովկասում: Իսկ ընդհանրապէս Ռու-
սաց ներքին կեանքը խաւարի եւ հալա-
ծանքի բաղդ ունէր: Միւս կողմից սխալ
էր մտածել, որ Վերսէս «աւելի էլ միջոց
կ'ունենար» գործել կովկասում, ուր նրա
գործանէութիւնը սահմանադրուած էր սոսկ
հասարակական կուլտուրական ասպարէզով
շնորհիւ պալատէնիայի. դա այն ասպարէզն
է, որի մասին Երասխանեանը աշխարհքում
երկու կարծիք չէ ծանաջում, եւ որը զուրկ
էր որեւէ պրոգրամից. դա Երթուրեան աս-
պարէզն էր բայց բնաւ Վարժապետեանի:

Եւ Երթուրեան մնաց Երասխանեա-
նից սահմանուած «ընդհանուր, դրու-
թիւններն սահմանում, հեռու պրոգրամի:

Ինչորից, ընդհանուր հասարակական տե-
ղական հայրերով եւ գործերով նա մնաց
յեկապարի վիճակում, իսկ իւր քաղաքա-
կան համոզմունքով մեկուսացաւ ու քարա-
ցաւ: Իւր միջակիցների շրջանում նա եւ
նրա կուսակցութիւնը յաղթեցին վերջին
կաթողիկոսական ընտրութեան արմուկների
ժամանակի, բայց իրեն քաղաքական դաւա-
նանքի տէր մի գործիչ, համարեա առանց
ձակատամարտի, յետ նահանջեց, տեղե-
տարով իւր բուն թէկնածուի, Սեդրա-
կեանի հետ միասին, երիտասարդութեան
պահանջի առաջ, որ չայնկոյս չորսանա-
նու պրոգրամի եւ ինքնավստահութեան
մարմնացումն էր, թէպէտ մասամբ իւր
տեսնողը — «Եւթ մահը եւս այդ վրայեց
կ'աղումը ցուցեց, որ երկրի մէջ երիտա-
սարդութեան մի հասուն սերունդ կայ, որի
ցնորքները հերոսութեան հովտում է գու-
րուրում. բայց չեղաւ մէկը, որ հաւա-
տար թէ այն ցնորքների խնամքը Երթու-
րեան պիտի հանդիսանար եթէ կնիւսնի իսկ
մնար: Եւթ պատճառով եւս բողոքից եւ
բաղում անստուգի, իբրեւ հասարակական
գործիչ, բայց ոչ ղը նրա բացակայութիւնը
զգաց քաղաքական ինչորիների զարգացման
ընթացքում, ապագայ տաղանակների մի-
ջոցին:

Եւ այնուհետեւ կատարուեց Մշակի
եւ նրա կուսակցութեան հետ այն, ինչ որ
այլ կերպ չէր կարող կատարուել: Յիշե-
ցինք արդէն, որ խաւարի եւ հալածանքի
մի շրջան էր որ համայն կայսրութեան մէջ
տիրում էր, բայց առաւելապէս Վովկասի
համար 19րդ դարու վերջին տասնամեա-
կում, Արծրունու մահից յետոյ: 1890ական
թուերի Ռուսաստանի տասնեակ նահանգ-
ների տիւր եւ նրա հետ կապ ունեցող բո-
լոր շարժումները մի բողոքող բանակ էր
ստեղծել տիրող կարգերի դէմ: Վկուեցին
ռասնողական անվերջ շարժումները եւ
զիւղացիների ըմբոստութիւնները: Բոլոր
հանգամանքները մի նպատակի էին ծա-
ռայում. բոլոր ճանապարհները Հոռոմ էին
տանում, եւ սուրբ էին. խորեան եւ բժշ-
կական օգնութեան տկար մատակարարու-
թիւնը բոլոր հասարակական գործիչներին
համարեւ թիւնից հանել էր. մինչդեռ այդ
բոլորի կողքին ծայր գաւառների ուսաց-
ման գործը յաջողութեամբ առաջ էին

տանում կառավարութեան գործակալները: — Եւ այդ եղանակով երկրի բոլոր երիտասարդ ոյժերը կանչուած էին միանալու ինքնօգնութեան, ինքնավստահութեան, ինքնապաշտպանութեան համար: Եւս առաւել կովկասեան հայերը. 1894 թուին հայկական դէպքերը, լօրանովսկու քաղաքականութիւնը, դպրոցների խափանումը, ապա Վ. Լիւնցիօի Վ. օրիցինի ընթերցումը — բոլորը մի նպատակ ունէին — առերեւ երկիրը. մի կողմից այդ շրջանում ընկերութիւններն ու խմբագրութիւններն էին փակուած, միւս կողմից երկիրը երիտասարդ ոյժերից էր զրկուած: Այդ կողմից ծրագիր էր մշակուած հայերին կովկասից գաղթեցնելու եւ միւս կողմից առատութեամբ քաջախիւսութեամբ եւ օժանդակութեամբ էր ռուս գաղթականներով Վովկար վերաբնակեցնելու գործը:

Վստահութեան չէ, լաւատեսութեան հետքն անգամ չկար երկրի քաղաքակրթ մտքի մէջ. նա մի սեւ տախտակ էր պատկերացնում այդ օրերին, եւ ոչ ոք չէր էլ մտածում թէ այդպիսի սեւ տախտակը կենդանութեան նշոյլ կարող է ցոյց տալ: «Մշտլը, այդ օրերին, ինչպէս կրկնուած էր Վալանթար ամէն նոր տարու համարի մէջ, խիստ պահպանողական քննադատութեամբ դաւանանքների օտհմանում ժողովրդի անդամական կարիքները հոգացող մի համեստ գործուն, թէպէտ ինքը Վալանթար մեծ եւ անհամեստ պահանջներով ճառեց հայ դեմոկրատներին 1906 թ. Վեկու. 2-ի ժողովի մէջ» Վարձար այդքան էլ չկարողացաւ անել եւ գիտաւոր աստղը նման շրջաններով երեւում եւ չբանում էր պարբերաբար: Արձագանքը խիստ արմատական հանդիսացաւ եւ այդ պատճառով քիչ բան էր կարողանում անել: Իսկ կրօնական դասը եւս առաւել. նա Վրէն երեցին հատուտացնէ: Եւս ցին ջանք վերացնելու թարախն ու խաշահամոլը, բայց աջահամոլորից հրաժարուող մի եպիսկոպոս չայայտուեց: Տէրտէրը զգալուեց բուռն գրկելով իւր անարկաւա եպիսկոպոսի դէմ, իսկ գիւլումուսը հայր-սուրբը դաւանաբանական խոր նրբութիւններով էր կերակրում Վարդապետ բաժանորդներին: Մայրաքաղաքի քահանան առձեռն ոտանաւոր գրեց այդ շրջանում, իսկ Եւսիւսինց չորս վերստ հեռու գիւղը հաւատաւորութեան յոյն

որտորդների զօհն էր դառնում տգիտաբար: Աշխարհի ինտելեգենտը աւելի վատ: 600 ուսուցիչ կար պարզապէս եւ նրա ամենամեծ տոկոսը դարձաւ վաճառականական գործակատար. գաղափարական շարժումն չձնան նորա, եւ համեմատել բարձրագոյն ուսանողութեան, գնադին որոնելու հարուստ վայելքը սպանների եւ փեսայութեան, այնպէս որ ներսիսեան դպրոցի 75 ամեայ յորեւեանին Ռազուից եկած ներկայացուցիչը Վ. Ռազույեան, բեմից այս յայտնեց միայն, որ դպրոցաւարտները կեանքի մէջ համեստ են եւ այդու արժանի հիմնարկի ժառանգը կուշուեաւ: Այլ թէ գովք չի նէր, այդ ծաղը կը լնէր:

Եւսպէս էր 19րդ դարի վերջին տասնամեակը Վովկասում. մտքի եւ սրտի մի կրիզիս էր նա պատկերացնում: Բայց ապագան բարեբաղդաբար ցուցեց, որ այդ մի հակընթաց էր, որ այնքան յատուկ է ինչպէս անհատի նոյնպէս եւ հասարակական հասանքներին: Ընտով հերոսութեան հիդրան գլուխ բարձրացրեց եւ գրաւեց իւր երկաթէ բազուկներով մտքի եւ սրտի այդպիսի անպատուղ անապատը: Եւս պատրաստի հող գտաւ Վովկասում, ուր հին դաւանանքը մահացած էր, իսկ երիտասարդութիւնը ցրուած էր անապատաց եւ գահաւիժութեանց: Ուստի եկեղեցական կալուածքների գրաւումը միայն սեպհականութեան գրաւումն չէր. նա Վովկասում ծնաւ հասարակական գրաւումն այն անորոգութեան եւ մեղկութեան շրջանից ուր երիտասարդութիւնը տարուբերութեամբ էր ամբողջ 10 տարի: Հակադիր ծնունդն օրէնքի ոյժով տանկահայի հերոսութեան քաղաքականութիւնը իւր կուրծքը մեկնեց առաջին անգամ Վանձակութեամբ Գալատրէն այդպիսով ջնջեց վստահութեան քաղաքականութիւնը Վովկասում: Պատմական բայց հնարովի թիւրիմացութեամբ հետեւեց հայթիւքական խժդուութիւնը, իսկ այդ գործաւորութեան ասպարէզում տանկական հիդրան լուցրեց եւ հնազանդեցրեց բոլորին, առաւել խորութեան մտքի, սրտի եւ դատակարգի: Եւս երկրում իրաւարտական, բարոյական եւ ետական արժանները գրաւեց քաղաքներից մինչեւ յետին խուլ խորթները. նա դարձաւ հրամայող ամենաքին եւ ամեն ժամանակ մինչեւ 1906 թիւր

— Ինքեան հետեւում է այդ բոլորից, որ առանց ուժեղ ժողովրդական ֆակտորի, առանց բնական օրէնքի անխուսափելիութեան. հասցրած մի դրդիչ պատճառի, հայկական ինքնավստահութիւնը չէր կարող ունենալ սենսացիոն յաջողութիւն. նա գեուր մնար, համառուական անարգիական ոյժերի կարգում, մի ծածկուած գանձ, ինչպէս եւ արդարեւ նա էր 1890ական թուերից սկսած ամբողջ ժամանակ, իւր օրդանական կազմադրումն առաջին շրջանում: Ո՛րայն համառուական ոյժերից տարբերուեց կովկասահայ ինքնավստահութիւնը իւր արտայայտութեան կանխմամբ: Ո՛րնչեւ միլիտարիան յաղթահարուած էր ֆիզիքապէս հետաւոր արեւելքում, մերձաւոր Ասիայում կառավարութեան քաղաքականութիւնը բարոյական յաղթահարման առաջին ցնցումներն էր ստանում հայ խնթերից: Ղիշդ է Վանձակում քաղաքացին էր, իսկ Բորչալում գիւղացին, բայց Բազում, Բաթումում եւ Սիւնիքում բանուորն էր այդ խնթը: Ուսում բանուորը մի ամբողջ տարի ուշ ցուցեց իւր ըմբոստութիւնը. առաւել ուշ իովկասում, դրացի Վանքիան եւ վրական ազգայնութիւնը որոնող Վանքիաբան, բոլորը միեւնոյն ուխտագնացութեան զգացմամբ, բայց տարբեր եռանդով եւ տարբեր հասկացողութեամբ:

3. Եզրակացութիւն:

Տրամաբանական ճշմարիտ բանավարութեամբ, պատմութիւնը չէ կրկնում, բայց այդ չէ նշանակում թէ վստահութեան քաղաքականութիւնը չէ կարող յարուածել առնել: Բնդհակառակն՝ մաքի վերածնութիւնը ամենատեսակ կուլտուրական տարրերի շրջանում անվիճելի է. եւս առաւել քաղաքականութեան շրջանում, քաղաքականութեան՝ որի էական եւ կենսատու զսպանկը շարժունութիւնն է դէպի բոլոր չորս կողմերը: Եւ վստահութեան քաղաքականութիւնը կրկին իովկասի հայ երիտասարդութեան ներշնչելը մի շատ հաւանական ենթադրութիւն է: Ինչու. նա, իբրեւ վստահութիւն, իովկասին շնորհուեց միապետական խիստ կենդրոնացման սխաւմի ոյժով, բայց հասարակապետական

կենդրոնախոյս ապագայ մի կառավարութիւնից վստահութեան քաղաքականութեան թելադրութիւնը գեւառելի հաւանական է յուսով այն պատճառով, որ բոլոր ծայր գաւառները, նոցա հետ նաեւ իովկասը, ինքնավստահութեան յոխորտալքի սպառնալիքով ամբողջութեան վստահութիւնը եւ օգնութիւնը իրաւունք կը դարձնեն իրենց համար: Եւ վերջին գէպքում, վստահութիւնը ոչ մի կէտում չէ համեմատուիլ նախկին ինստիտուցիոն ներշնչումների հետ, այսինքն իովկասահայը նախկին հովանաւորման խաբուսիկ անհոգութեան մէջ չէ ընկնիլ կրկնողաբար, այլ հասարակապետութեան վստահութիւնը նա կ'ընդունի կամ ինքնավստահութեան յոխորտալքի կամ փոխադարձ վստահութեան ոյժով: Եւ, եւ հասկանալի հետեւողութիւնն է պատմական անարգիայի եւ միակ հաշտ կոմիւնացիան է, որ հարաւոր է մտածել աչքի առաջ ունենալով իովկասեան հայութեան բոլոր կուսակցութիւնների ծրագիրների բովանդակութիւնը անխտրաբար:

Եւ, Եւնթադրութեան մէջ ապագայ մանրամասնութիւնները անորոշ գծերով են յայտնուած, բայց իսկական վիճակը, որի հետ կարող է երեւիցէ հաշտուել ներկայ օրերին գոյութիւն ունեցող իրերի ֆակտային պատմական հիւսուածքը, այս է, որ վստահութեան քաղաքականութեան մի ապագայ շրջանում անպատճառ սպասուի հին լիբերալների կուլտի վերածնութիւնը — այդ երաշխաւորուել ենթադրութիւնն է: Բարեկենսում հպարտութեան զգացմամբ, ամենակարող հովանաւորութեան հաւատով եւ մանաւանդ ինքնավստահութեան հերոսական վճռող տակտիկայից զուրկ հոգով այն հին լիբերալները տապալաւորում եւ այժմ իսկ մի պատմական ժողովրդի զարկը կը լինեն, բայց ժողովրդական կենքի Վիկակարը — բնաւին: Եւրպէս նաեւ Մշակի կուսակցութեան վերջին փշուրները: Մինչեւ մի վերածնութեան շրջանի յատուկ է այլեւայլ, շատ անգամ հակասական տարրերի իսկ խմորմամբ, կուլտերի կրթող մոլեռանդ պաշտամունքը, կովկասահայ կենքում այդպիսի մրցման համար ամենաթոյլը Մշակի հայ գիմնալատ կուսակցութիւնն է այժմ, որ ինչպիսի

միջոցառումներ մէջ էր 1906 թուին, ըստ Ղիւզերի (տես վերը) եւ այդպէս թող նա կը մնայ միշտ ապագայում շնորհիւ թիւր ընթացքի, որ բռնեց նա հիմնադրի մահից յետոյ։ Ինքը Վրժարունին — հին լիբերալ, սին վատահոլութեան քաղաքականութեան, եւ հաւատարիմ հասարակական բարօրութեան, քաջալիրեց Բաժնեւոր գրքերով համայն հայութեան սրտի միակերպ բարախումը յայտնի եւ յայնկոյն Վրժարունիութեան։ Իսկ նրա յաջորդները այդ հզօր գաղտնիքը լուրհանգրիւն, նոյն իսկ քառահարկեան, ստեղծ մի ինքնապաշտպանութեան գործ եկաւ մեզ մոռացութեան տուեց (տես վերը)։ Իրենց անցաւոր անձնաւորութիւնը, նրանք այդպէս, հակադրեցին այն գործին, որ դարի շարքեր կանել է, բայց լուծումն չէ գտել։ Եւ առ վայր ի վերոյ հասկացան նոքա այդ գործ — մի ինքնապաշտպանութեան գործ —, մինչդեռ գործերի այն կարգերից էր եւ նա, ուր առհասարակ ամբողջութեամբ են ազգերի, ժողովուրդների, դարերի իսկ մտքի եւ սրտի միակերպ բարախումը։ Սխալ էր այն գործը հաստատուած, հարկաւոր էր ուղղել։ Կեղծ նպատակի էր նա առաջնորդում մարդկանց, անհրաժեշտ էր իրականը հաստատել։ առաւել մեծ եւ կական գործ կար, որի համար պահանջութեամբ էր հայ մտքի եւ սրտի միակերպ բարախումը, այն պէտք էր ստորագրել։ Սինդրեա, ինչպէս կը տեսնենք, 1906 թուին ոչ մէկը նոքա չարին։ Բոլորը ինչ որ արին, այն էր, որ խանգարեն լուծին ոյժերի միակերպ բարախումը։ Բայց այդ նրանց չափողութեան։ Իրենք խանգարուեցին ու լուծուան։

Իսկ ինչ է խոստանում տալ իրերի ներկայ վիճակը դրականապէս ապագայում — դժուար է որոշել։ Իսկ երկարորութեամբ միայն — հետեւեալը։ Վատահոլութեան քաղաքականութիւնը նոր շրջանում գործունէութեան համար, յաջորդութեան իսկ յուսով, իրական տարտականամեծ պիտի որոնէ։ եւ կը հանդիպէ այն ժամանակ մի ուժեղ գործող տարրի, որ օժտուած կը լինի անուայման իրաւունքներով հոգալու յայտնի եւ յայնկոյն Վրժարունիութեան։ Եւ այժմ այդպիսի տարրը Վրժարունի հայերի մէջ ինքնապաշտպանութեան եւ ինքնավատահոլութեան պաշտպանութիւնն է։ Իրաւ,

նրա ապագան, ինչպէս ամեն քաղաքական կուսակցութեան ապագան, համայն տեղի եւ պատմական հրամայող պայմանների, փոփոխակի բաղդ ունենալու յուսով վիճակի մէջ, մանաւանդ Վրժարունի ուր դրացի ժողովուրդների մէջ կուսակցական ինդիւնների եւ թիւր եւ կեղծ ընթացքի շնորհիւ ապագայ բարդութիւնները անխուսափելի են կարծւում, բայց նա իրեն կուսակցութիւն, ամեն շրջանում — անցեալում եւ ներկայում — անհրաժեշտութեան բնական պահանջի արդիւնք է եղած, իսկ պահանջը դեռ վերացուած չէ։ Ինչպէս մի փոփոխական քաղաքականութիւն չէ ծնել նրան, ինչպէս օրինակ հայկական լիբերալիզմը ծնուեց հովանաւորող քաղաքականութեան ջանքով։ Եւ անհրաժեշտութեան պահանջը պատմական բախտն է մի ամբողջ ազգի հայ է սրբագործել դարերով շարունակ։ Նայ ազատարարների կենսաբան գործունէութիւնը եւ կարեկից հայաստանների աշխատութիւնն ու ցանկութիւնը։ Եւ յայտնի սրբագործութիւնն է այն կուսակցութեան բաղաւոր աստղը ապագայ փայլման գրաւականը եւ այն աստղը հանդէպ անցեալ, ներկայ եւ ապաւանի բոլոր հայ կուսակցութիւնները մարդակի էութիւն ունին։

Վերջում, առանձին հետաքրքրութեամբ պարտ եւ նկատել պատմական շրջանի այն բնաւորութիւնը, որը տարբերում է մտքի առանձնապատուկ վիճակը 25 տարի առաջ եւ յետոյ։

Վատահոլութեան քաղաքականութիւնը, որ երկուստարդութեան միայն մի խմբի դաւանանքն էր առաջ, 1905 թուին մերժուեց հասարակութեան գիւղացիութեան եւ բանւորութեան բոլոր խաւերի կողմից, ըստորում միաբեր փշուած էր արդէն հարիւր հազար բիւր մասնիկների եւ սեպհականութիւն էր դարձած ամբողջ Վրժարունիական հետեւեցին մի շարք երեւելիքներ, որոնք ազատութեան մէջ էին գուրգուրում միտքը։ Դժողովները, ընկերութիւնները, հանգանակութիւնները առաջ տեղի ունէին թոյլատրական շրջանակի մէջ վատահոլութեան քաղաքականութեան ապրումներ, իսկ 1905 թուին նոքա ամբողջական խաւային դասակարգային են ինքնավատահոլութեան յոբորտանքի խանձարութեամբ։

Վրացաիրական գրքերի եւ տոանուորների ժողովածուների հրատարակութիւնը առաջ քաղողքադրական գրիչներով էր թոյլատրւում, իսկ 1905 թուին յեղափոխական գրականութիւնը եւ հին շրջանի ծածուկ հրատարակութիւններն ու ձեռագիրները մնալ տեստներով տպագրւած հաջաւորուոր օրինակներով տպագրւում են ամբողջի մէջ։ Ընդհանուր հայկական մագի միութեան փորձը մի պայմանական ընկերութիւն հաստատելու առաջադրութեամբ է առաջ հանդէս գալիս, որը չէ էլ իրագործւում քաղաքական տեսակետներով, իսկ 1905 թուին հայկական փոքր ամբողջունում է շարժուելով յայսկոյս եւ յայնկոյս հորդանանու միեւնոյն յորդորով, յանձին մի կազմակերպութեան, որ ժողովրդական դարաւոր պահանջի արդիւնք է։ Հատարական կեանքը միակողմանի սոսկ քաղաքականութեան ուղղու թաւար իւր ընկացքի մէջ տուած էր առաջ, սակայն սակաւ խաբուած հանդիսանալով քաղաքականութեան առաջ եւ փոք յոյսերի զգացմամբ յետ ընդգրկուելով, 1905 թուին քաղաքակրթական բոլոր տարրերը ժողովրդական ազատութեան ինքնուրոյնութեան մէջ ամփոփուեցին, իսկ այսպիսի ամփոփումը քաղաքական մտքի եւ կեանքի չափափոխութեան հիմնաքարը դարձաւ։ այդ եղանակով վերացաւ միակողմանիութիւնը, որ հին շրջանին յատուկ էր, եւ նրա փոխարէն հաստատուեց ամբողջաբաժն առաջդրել գործունէութեան ազատ մտքի եւ ազատ կամքի։

Եւս է 1906 թուի նախօրեակի առաւելութիւնը հանդէպ այն «փառաւոր, շրջանի, որ կովկասահայր ուներ 1880ական թուերին։ Եւսք առաւելութիւնն է այն բոլոր սկանդալների սկզբնապատճառը, որոնք 1906 թուին առանձնապատուկ էին, եւ որոնք մինչդեռ բացարձակ չարիք են ըստ հայեցման յաղթահարեալի, բայց յորաւրերական բարիք են նաեւ ըստ չափու. յաղթահարողը։ 1906 թուի՝ հաշուետարին ճիշդ հասկանալու համար այդ առաւելութիւնը գիտակցել անհրաժեշտ է. անհրաժեշտ է մանուսանդ մամտալու համար այն հարաւորը առգոգան, որ 1906 արանդալաւա շատ տարու. կերպարանքի իսկ կարանդալալում է։

1. Գ.Ր. ՏԷՐ-ՊՕԶՈՍԵԿՆԻ

[illegible]

ՀՈՒԿԱՍ Կ. ԽԱՐԲԵՐԴՅԻ

Հանդիպելու Անրիկայ Թուրքույ մեկ (ՀՋ. 204) խոսելով Հ. Գալսեփյանի մասին Զուհույ Հ. Խաչատրյանը գրեթե ցրտահամար խնամք կլիպ, ամուրթը իր տեսնեմ Գիտը Խաչատր. Թեանը գործոյն (Դպրատանը) նկատելի է Թեոդորուս Ժեմանի տեմ Հիդիոյն իմացականութեան, ի Սարգիսի Ժեմանի Ժեմանի Ժեմանի ի զառաւարտութեան իմաց կնիսի ի մէկ իր բերնն իմաց գրոցս Ա. Ռաւորի Յիշատակականն (Ժեմ. մեր Մատենադարանն, ամբիւրձ հետեւեալ տողից)

«Գիրքս այս, որ կոչի խաբէութիւն աշխարհի,
նմ ք հաստորք գլինմ աւարտանքի Աստուծոմ, որ է
Ա. հաստորք. եւ գրիւմ թարգմանիցք իմ ևորին
օգնութիւնսմ իտապարմ չնգաւ օժանդակութիւնսմ
եւ գլոյթք Յօհաննէս եպիսկոպոսի եւ պատրիարքի
մայրաքաղաքիմ Գոստանգրնիսպօրոյն . . միշտդոյն-
նիւմսմ Յակոբ աստուծոժարմ վարչապետի եւ
եպիսկոպոսի . . Նս Լուկաս շնիւմ վարդապետս
խաբէրոցի որդի Աբրահամսն ի տմմէն Գաւ-
պարեան, յորտրիւնք թարգմանի ձայնք պատ-
րիարքի Թովն Էրիստան 1730, ի ժամմ-
նակի ապապատմիցսն այլաօգնանք ընդդէմ իշխանիմ
իւրեանց. . — Բ. հաստորիմ Յիշատակարմն զսս
մոր Օրհնանիմ չռնի թռակսմ:

ԽՄԲ. «ՀԱՄԴԻՍԻ»



የገቢዎች ምንጭ

ՈՒՍՈՒՄՆԱԿՐՆ

ԿԵՆՏՐԱԼԻԶԱՆՔ + ԳԵՐԻ. 2. Նիկողայոս Թ. Ժ. Վ. Աւ-
գերեան + (պատկերազարդ). 193: - Մարգիտ
արքեպ. Մարաֆեան. 195: + Մարգիտ արքեպ.,
Մարաֆեան Եւ Խոր ժամանակը 1720-1776.
(պատկերազարդ). 196: .

ՄԱՏԾՆԱԳՐԱԿԱՆ + Մխիթար Գոշի Դպրատան
գիտքը եւ Հայոց հին քաղաքացիական իրաւ
ւունքը. 206:

ԱՇԽԱՏԱԳՐԱԿԱՆ Լ ՎԻՆ ՀԱՅՈՐ տեղւոյ ամսու-
նեքը, 211:

ԳՐԱԳՐԱՆ Է Հիմք դադարեց Մ. Այրիվանեսյան Ժա-
մանակագրությունում ՎՇԻ, 319: ~ 1906 թիվը
Յովկանանայ կենսություն. 314: ~ Հուլիսի 24,
Խաղողագործի. 224:



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՅԻՆԱԿՈՒ ԽՄԲԱԳԻՐ

3. ԱՓՈՓԱՅԵԼ 4. ՊԱՐՈՆՉ

ՎԻՇԵՆԱԸ, ՄԻՒԹԱՐԿԵԱՆ, ՏՊԱՐԱՆ